# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 31-Ա

## ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու թիվ 08 հերթական նիստի օրակարգը՝

1. Բաղրամյան համայնքի ղեկավարի 2017թ. աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:
2. Բաղրամյան համայնքի 2016 թվականի տարեվերջի գույքագրման արդյունքների ամփոփման և օգտագործման համար ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին:
3. Բաղրամյան համայնքի 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման մասին:
4. Բաղրամյան համայնքի 2016թ. բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
5. Համայնքի նորատունկ այգիներ հիմնած սեփականատերերին հողի հարկից ազատելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 32-Ն

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017Թ. ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ, 26-րդ կետերով և «Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի դրույթներով ***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Հաստատել Բաղրամյան համայնքի ղեկավարի 2017թ.աշխատավարձը 230,000 /երկու հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Հաստատել 2017թ. Բաղրամյանի համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն 1, 2, հավելվածների:
3. Ուժը կորցրած ճանաչել Բաղրամյան համայնքի ավագանու 04 դեկտեմբերի 2015 թվականի«Բաղրամյան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի, բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին» թիվ 23-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ԴԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ**

Հավելված 1
Բաղրամյան համայնքի
ավագանու 2016թ. դեկտեմբերի 8-ի N 32-Ն որոշման

# ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 12
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ /ՀՀհազ.դրամ/ |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | | 230,0 |
| ***ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 116,0 |
| ***ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ*** | | |
| Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 157,0 |
| Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/ | 1 | 148,0 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 147,0 |
| Համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2-1/ | 1 | 105,0 |
| Համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/ | 1 | 104,0 |
| ***ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ*** | | |
| Մշակույթի տան տնօրեն | 1 | 87,0 |
| Գրադարանավար | 1 | 85,0 |
| ***ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ*** | | |
| Հավաքարար | 1 | 95,0 |
| Պահակ | 1 | 85,0 |
| ***ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ*** | | |
| Հարկահավաք | 1 | 95.0 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Բաղրամյան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 08–ի թիվ 32 -Ն որոշման

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>>-Ի ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը 11

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀՀ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ |
|---|---|---|
| Տնօրեն | 1 | 148,5 |
| Դաստիարակ | 2 | 296, 253 |
| Դաստիարակի օգնական | 2 | 161,1 |
| Երաժշտ. դաստիարակ | 0.5 | 72,751 |
| Բուժքույր | 0.5 | 72.751 |
| Հաշվապահ | 0.5 | 78,0 |
| Լոգոպեդ | 0.5 | 78,0 |
| Խոհարար | 1 | 77,8 |
| Լվացքարար | 0.5 | 72,751 |
| Դռնապահ | 1 | 77,8 |
| Պահակ | 1 | 77,8 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33-Ն

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետին համապատասխան ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել գույքագրման հանձնաժողովի 06.12.2016թ. կազմած ակտերը՝ համայնքապետարանի, կուլտուրայի տան և մանկապարտեզի գույքագրման արդյունքների վերաբերյալ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ԴԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ Ու Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 34-Ն

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան.
***համայնքի ավագանին որոշում է՝***

Սահմանել Բաղրամյան համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերը և վճարները համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ԴԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

Հավելված 1
Բաղրամյան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 08-ի N 34-Ն որոշման

1. *Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝*

*հիմնական օբյեկտների համար՝*

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 ՀՀ դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15.000 ՀՀ դրամ.

բբ) 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բգ) 1001-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35.000ՀՀ դրամ.

բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 40.000 ՀՀ դրամ.

*ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝*

գ) մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 ՀՀ դրամ,

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 ՀՀ դրամ:

2. *Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝*

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500 ՀՀ դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 2500 ՀՀ դրամ:

4. *Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝*

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 2.500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3.500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 5.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 15.000 դրամ,

զ. 501 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 30.000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 2.500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 3.500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 5.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 15.000 դրամ,

զ. 501 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 30.000 դրամ:

5. ***Համայնքի տարածքում՝***

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 10 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 ՀՀ դրամ.

գ) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 դրամ.

զա) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ հիմնական շինությունների ներսում՝

ա.մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 2.000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 3.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 8.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 10.000 դրամ,

զ. 501 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 15.000 դրամ,

Ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 1.000 դրամ,

գ. 51-ից մինչև 100 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 3.000 դրամ,

դ.101-ից մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 4.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5.000 դրամ,

զ. 501 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 6.000 դրամ:

5.1. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանել 50.000 դրամ:

_6.*Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝*_

ա) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 ՀՀ դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 ՀՀ դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500.000 ՀՀ դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 ՀՀ դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 ՀՀ դրամ:

7. _*Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝*_

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500դրամ.

դ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

7.1 համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 250 դրամ:

7.2 եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ

տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 100 դրամ:

8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2000 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 75. 000 ՀՀ դրամ:

9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10.000 ՀՀ դրամ:

9.1 Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և /կամ/ մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000 դրամ:

10.Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով

11. ***Սահմանվում են հետևյալ տեղական վճարներ՝***

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ 10.000 ՀՀ դրամ.

բ) Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ 3000 ՀՀ դրամ.

գ) Համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար 3000 ՀՀ դրամ:

***Համայնքի տարածքում սահմանել աղբահանության վճար՝***

1) կենցաղային աղբի համար

յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0 դրամ.

2) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար՝

ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ առավելագույնը 5.000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35-Ն

### ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական Ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով ***համայնքի ավագանին որոշում է՝***

Բաղրամյան համայնքի 2016 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները
ՊԱԿԱՍԵՑՆԵԼ՝ - վարչական բյուջեի եկամտային մասից 12,5 հազ.դրամ, որից
900415159194 ծրագրից - 7,5 հազ.դրամ
900415159160 ծրագրից - 5,0 հազ.դրամ
Վարչական բյուջեի ծախսային մասի 01.01.01.51 ծրագրի 4111 հոդվածից 507,5 հազ.դ:
ԱՎԵԼԱՑՆԵԼ՝ - 01.01.01.51 ծրագրի 4252 հոդվածին – 50,0 հազ.դր.; 09.01.01.51 ծրագրի 4239 հոդվածին - 445,0 հազ.դր:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ԴԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բաղրամյան համայնք
Գ.Բաղրամյան, Արտաշատյան խճուղի 4, 023560074;/077/796060

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԱՅԳԻՆԵՐ ՀԻՄՆԱԾ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Յողի հարկի մասին >> Յայաստանի Յանրապետության օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով ***համայնքի ավագանին որոշում է՝***
Բաղրամյան համայնքում 2016թվականին նորատունկ այգի հիմնած ներքոհիշյալ հողի սեփականատերերին ազատել հողի հարկից:

1. Խաչատրյան Կառլեն Գոմեղինի - 0,6 հա /ծածկ.0315 – 0002/ պտղ. /դեղձ/ 2017-ից մինչև 2021թ.
2. Յամբարձումյան Նելլի - 0,25 հա /0310 - 0002/ պտղատու այգի/ դեղձ/ 2017-ից մինչև 2021թ.
3. Սարգսյան Զոյա - 0,54 հա / 0123 - 0001/ պտղատու այգի/ դեղձ/ 2017 -ից մինչև 2021թ

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԼՍՏՅԱՆ ԵՐՎԱՆԴ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳԵՂԱՄ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՆՈՒՇ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՍԻԿ ԲԵՆՅԱՄԻՆՅԱՆ